ERICH KETTENHOFEN. *Tirdād und die Inschrift von Paikuli, Kritik der Quellen zur Geschichte Armeniens im späten 3. und frühen 4. Jh. n. Chr.*, *Dr. Ludwig Reichert Verlag*, Weisbaden, 1995, 203 p.

ԷՐԻԽ ՔԵԹԵՆՀՈՖԵՆ, Տրդատը և Պայկուլիի արձանագրությունը. աղբյուրների քննություն..., Վիսբադեն, *1995*, *203* էջ։

Հայտնի է, որ գերմանական հայագիտությունը իր մեծ նպաստն է բերել հայ պատմագիտության զարգացմանը։ Մինչև այսօր էլ Հ. Հյուբշմանի, Հ. Մարկվարթի և այլ նշանավոր ուսումնասիրողների գործերը չեն կորցրել իրենց թարմությունն ու գիտական արժեքը։ Ցավոք, սակայն, Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմները ծանր, եթե չասենք՝ մահացու հարված հասցրեցին հայագիտությանը Գերմանիայում, և վերջինս այլևս արտասահմանյան հայագիտության առաջատար երկիրը չէ։ Պետք է հուսալ, որ միավորված և երիցս հզորացած Գերմանիայում հետաքրքրությունը հայագիտության նկատմամբ կաճի, և թերևս կարճ ժամանակում կվերականգնվեն անցյալի լավագույն ավանդույթները։ Համենայն դեպս՝ դրա առաջին նշանները կարծես թե շոշափելի են, որոնց արտահայտություններից մեկը Էրիխ Քեթենհոֆենի «Տրդատը և Պայկուլիի արձանագրությունը» աշխատության հանդես գալն է։

Գերմանացի արևելագետի ուսումնասիրությունը ամենից առաջ աղբյուրագիտական բնույթ ունի, որն, ի պատիվ հեղինակի, խարսխված է պատմական իրադարձությունների լայն հենքի վրա։ Աշխատությունը որպես ատենախոսություն պատրաստվել է Տրիրի համալսարանում 1990 թ., իսկ ավելի ուշ՝ 1992/93-ին էապես բարելավվել տպագրության նպատակով, թարմացվել նոր լույս տեսած գրականությամբ։

Հեղինակի հետաքրքրությունը Պայկուլիի արձանագրության նկատմամբ ծնունդ է առել բավականին վաղ. 1981/82-ին Տյուբինգենի համալսարանում անցկացված գիտական սեմինարը ի թիվս այլ հարցերի քննության է առնում Պայկուլիի արձանագրությունը։ Աշխատությանս հեղինակի հիմնական ծանոթությունը արձանագրությանը կապված է եղել «Առաջավոր Ասիայի Տյուբինգենյան ատլասի» կազմման աշխատանքների հետ։ Դիոկղետիանոս-Կոստանդինյան ժամանակաշրջանի քարտեզը կազմելիս նա լրջորեն ուսումնասիրում է Ներսեհ (Նարսեհ) Սասանյանի թողած արձանագրությունը։

Ուսումնասիրությունն ունի կարճ ներածական, ուր հիմնական գծերով տրված են հեղինակի առջև դրված և ուսումնասիրված խնդիրները։ Ապա ընթերցողին է մատուցվում օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկը, որը իր մեջ է ներառնում հրապարակի վրա եղած և հարցին վերաբերող գրեթե ողջ գրականությունը։ Հեղինակը օգտագործել է Ներսեհի, Շապուհ I-ի և Կարտիրի (Կերտիր) արձանագրությունների բոլոր հրատարակությունները, պարթևական գրական հուշարձանները, հին հայկական, հունական, լատինական, ասորական, արաբական և նոր պարսկերեն բազմաթիվ սկզբնաղբյուրներ։ Ուսումնասիրությունների ցանկում որոշակի բաժին ունեն հայ և ռուս հետազոտողների գործերը։ Հեղինակը լայնորեն օգտվել է նաև քարտեզագրական նյութերից, ինչպիսիք են՝ Ս. Երեմյանի, Հ. Հյուսընի, Ս. Պիրկերի, Թ. Ռիփլինգեր /Հ. Բենների և իր իսկ՝ հեղինակի կազմած պատմական քարտեզներն ու ատլասները։

Աշխատության բուն շարադրանքը սկսվում է Պայկուլիի արձանագրության տեղագրությամբ։ Բնագրի առաջին հրատարակիչը եղել է Է. Հերցֆելդը, հետագայում Վ. Բ. Հեննինգը և Պ. Օ. Սկյարվյոն որոշակի ճշգրտումներ են մտցրել նրա ընթերցման մեջ, տվել թարգմանությունն ու մանրամասն մեկնաբանություններ։ Հեղինակը ընթերցողին է ներկայացնում արձանագրության այն մասը, ուր հիշատակվում են Ներսեհին շնորհավորանքներ հղած երկրներն ու տիրակալները, ապա և մանրամասն քննության առնում այն։ Հստակորեն ցույց է արվում, որ հիշյալ ցանկը աշխարհագրական կանոնավոր հերթականություն ունի։ Քննությունն ընդգրկում է տարածական առումով Սասանյան Պարսկաստանն ու շրջակա որոշ երկրներ։ Կարևոր ենք նկատում անդրադառնալ Բաղասականին, մազքութների երկրին և Տրդատի թագավորությանը, որոնք որոշակի

հետաքրքրություն են ներկայացնում հայագիտության տեսանկյունից։

Հեղինակը հակված է կարծելու, թե Բաղասականի տեղադրությունը դժվար է ճշգրիտ որոշել։ Այսուհանդերձ, տալով հարցի պատմությունը և աղբյուրագիտական նյութը, է. Քեթենհոֆենը գալիս է այն եզրակացության, որ Բաղասականը պետք է հատկացնել Աղվանից աշխարհին։ Բաղասականի տեղադրությունը Կուրի ձախափնյակում, չնայած արաբական աղբյուրների որոշ հակասական տվյալներին և Ն. Ադոնցի եզրակացություններին, կասկածներ չի հարուցում, ինչը հստակորեն հավաստում է հայկական «Աշխարհացոյցը»։ Վերջինիս ընդարձակ խմբագրությունը Քուստի-Կապկոհում միաժամանակ հիշատակում է թե՛ Բաղասականը և թե՛ Սիսականը (Սյունիքը)։ Եվ քանի որ հայտարարված 13-ի փոխարեն աշխարհագրական երկը նշված քուստում հիշատակում է 14 աշխարհի անուն, ապա կասկածից վեր է, որ սկզբնապես դրանցից մեկն ու մեկի անունը բացակայել է բնագրում։ Հպանցիկ ծանոթությունն անգամ ցույց է տալիս, որ Սիսականը բնագրում կարող էր հայտնվել միայն 571 թ. հետո, երբ Սասանյանները Սյունիք-Սիսականը վարչականորեն անջատեցին Արմնի կամ Հայքի մարզպանությունից։ Դրան հակառակ՝ Բաղասականը որպես առանձին վարչական միավոր կարող էր գոյություն ունենալ միայն V դարում, ինչպես հավաստիացնում է Եղիշեի աշխատությունը։ Այն որպես թագավորություն և դրանով իսկ որպես անկախ վարչական շրջան գոյություն ուներ Վարդանանց պատերազմի շրջանում և դարի վերջին՝ ամբողջությամբ կորցնելով իր որոշ վարչական ինքնուրույնությունը (որովհետև թագավորությունը պարսիկները վերացրեցին V դարի կեսերին), լիովին ներառնվեց Աղվանից մարզպանության մեջ։ Բաղասականը չէր կարող տարածվել Կուրից հարավ ընկած շրջանում, որովհետև նույն «Աշխարհացոյցը» այստեղ հիշատակում է Աղվանից մարզպանությանը միացրած Արցախ ու Ուտիք և Ատրպատականին միացրած Փայտակարան աշխարհները, որոնք վարչաքաղաքական առումով անջատվել էին Մեծ Հայքից։

Քեթենհոֆենը մանրամասն քննության է առնում Մազքութների թագավորության խնդիրը։ Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունը հաջողված է, սակայն կան մի քանի հարցադրումներ, որոնց վրա կամենում ենք հրավիրել հեղինակի ուշադրությունը։ Մի կողմ թողնելով մազքութների հոնական ցեղ լինելու հանգամանքը (հեղինակն այն կապում է ուշ ժամանակների ավանդույթի հետ), անկասկած է, որ մազքութները էթնիկ առումով պատկանել են իրանական աշխարհին և մտել ալանական ցեղախմբի մեջ։ Հայտնի է, որ Մազքութաց թագավորները Արշակունի էին, իրողություն, որը մեզ իրավունք է տալիս նույնացնելու մազքութներին և Տակիտոսի կողմից I դարում հիշատակված Սկյութական թագավորության բնակիչներին, որոնց թագավորը նույնպես Արշակունի էր, այսինքն Արշակունյաց արքայության կրտսեր որևէ մի ճյուղի ներկայացուցիչ, որի հյուրընկալությանը անհաջող կերպով փորձեց ապավինել պարթևական և հայոց գահը կորցրած Վոնոն թագավորը։ Կարելի է եզրակացնել, թե մազքութները I դարում դեռևս գտնվում էին Հյուսիսային Կովկասում, և նրանց ճնշման տակ էր, որ գարգարացիները, ուտիները և մի շարք այլ ցեղեր, որ բնակվում էին Հյուսիսային Կովկասում, շարժվելով հարավ՝ մուտք գործեցին Այսրկովկաս, Աղվանքի տարածքը։ Մազքութները, հավանաբար, նոր հայտնված ցեղերի ճնշման ներքո իրենք ես ներխուժեցին Այսրկովկաս III դարում, բայց ոչ թե դարի վերջին, ինչպես կարծում է Պ. Օ. Սկյարվյոն, այլ հավանաբար Սասանյանների՝ Պարսկաստանում հաստատման խառնակ շրջանում։ Ընդհանրապես չի բացառվում, որ նրանց մուտքը Այսրկովկաս կատարվել է Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության թույլտվությամբ, սակայն, եթե այդպես իսկ էր, նրանք որոշ ժամանակ անց դուրս եկան Հայոց թագավորության վերահսկողությունից։ «Աշխարհացոյցում» Ասիական Սարմատիայի նկարագրությունը ցույց է տալիս, որ վերջինս իր մեջ ներառնում էր նաև Արևելյան Այսրկովկասը, որտեղ բնակվող ցեղերը բաղաքակիրթ աշխարհի մաս չէին դիտվում։ Անուղղակի տվյալներից պարզվում է, որ այս կացությունը կարող էր լինել III դարի կեսերին, որովհետև IV և V դարերում վիճակը արմատապես փոխվում է։ III դարում մազքութները տիրում են ամբողջ Աղվանքին, և նրանց թագավորությունը ավանդույթի ուժով ստանում է Աղվանից անունը։ Ավելի ուշ, երբ պարսից արքունիքը տիրեց Արևելյան Այսրկովկասին և ստեղծեց Աղվանից մարզպանությունը, հիշյալ տարածքները ուղղակի կամ անուղղակի վերագրվում են Աղվանքին։ Մազքթաց թագավորության շրջանի նշված իրողությունը պահպանել է Փավստոս Բուզանդը, որի խոսքերով Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիս եպիսկոպոսը «եհաս յաստիճան եպիսկոպոսութեան աշխարհին Վրաց եվ Աղուանից՝ այսինքն սահմանացն Մազքթաց»։ Վերջապես, մազքութների կողմից ողջ Աղվանքին տիրելու իրողությունը պատճառ է դարձել, որ Գուգարաց բդեշխությունը կոչվի «ի մազքըթաց կողմանէ», ինչպես հավաստում է Աղա-

Թանդեգոսը։ Բուն Մազքթաց երկիրը զբաղեցնում էր Դարբանդի կամ ավելի հին անունով հայտնի Չողի շրջանը և հարակից տարածքները, սակայն մազքութների քաղաքական իշխանությունը տարածվում էր ողջ Աղվանքի վրա՝ մինչև Կուր մեծ գետը։

Հեղինակի քննության կարևոր առարկան է Պայկուլիի արձանագրության մեջ հիշատակված tyldt MLK'-ը (Տրդատ Թագավորը)։ Այս առնչությամբ մանրազնին քննության է ենթարկում հայկական, հունա-հռոմեական աղբյուրների տեղեկությունները Տրդատ III-ի և հայոց գահի վերաբերյալ։ Հեղինակը մի ամբողջ ենթագլուխ է նվիրել հիշյալ հաղորդումների և նրանց վերաբերյալ ուսումնասիրությունների վերլուծությանը։ Օգտագործված են բոլոր հաղորդումները, թվագրումներն ու նրանց համեմատական քննությունները, ելակետ ունենալով այնպիսի ճշգրիտ հայտնի թվականներ, ինչպիսիք են Նիկեայի ժողովը, Դիոկղետիանոսի կառավարման տարիները և այլն։ Ամբողջ քննությունը ցույց է տալիս, որ Քեթենհոֆենը քաջածանոթ է բոլոր նյութերին՝ իրենց մանրամասնություններով և մատուցում է համադրական և համեմատական հետազոտությամբ, հաշվի առնելով արդի պատմագիտության նվաճումները։ Մասնավորապես նա կանգ է առնում III դարի ժամանակագրության և հայոց տիրակալների իշխանության տարիների ճշտման վրա։

Իմ կարծիքով, որոշ վիճելի դրույթներ կան III դարի վերջի քաղաքական իրադարձությունների հետ կապված։ Տրդատի գահակալությունը Մեծ Հայքում 287 թ. կամ դրանից շատ չանցած կատարվել է Հռոմի և Սասանյան Պարսկաստանի միջև փոխադարձ համաձայնությամբ։ Համենայն դեպս, այսպես կոչված Տիգրանակերտի արձանագրությունը, որ, ըստ իս, գրվել է Տրդատ III կողմից, վկայում է, թե Աղձնիքի տարածքը Նփրկերտ (այժմ՝ Սիլվան) քաղաքի շրջանում գտնվել է հայոց գահակալի իշխանության ներքո, իրողություն, որ մենք չենք տեսնում 298 թ. Մծբինի պայմանագրում։ Հայոց գահակալի շնորհակալական կեցվածքը և՛ Հռոմի կայսեր, և՛ Պարսից արքայից արքայի նկատմամբ հավաստում է, որ Տրդատի գահակալությունը ընդունվել է թե՛ մեկի և թե՛ մյուսի կողմից, չնայած անտարակույս Տրդատը առավելապես գտնվել է Հռոմի ազդեցության ոլորտում։ Միաժամանակ այլ աղբյուրներից դժվար չէ տեսնել, որ Ներսեհ Սասանյանի իշխանությունը պահպանվել է Մեծ Հայքի արևելյան մի ինչ-որ հատվածի վրա և ոչ թե նշանակալից մասի, որովհետև Գրիգոր Լուսավորչի բանտարկությունը, որքան էլ առասպելներով շղարշված, իրականություն է, հետևաբար գոնե մինչև Այրարատը ներառյալ պետք է գտնվեր Տրդատի իշխանության ներքո։

293 թ. Ներսեհը տիրացավ երկար փափագած պարսկական գահին։ Այդ ընթացքում տեղի ունեցան մի շարք իրադարձություններ, որոնք լոկ անուղղակիորեն արտացոլված են Մծբինի պայմանագրում։ Պարսիկները Հռոմին են զիջում հայկական հինգ երկրամասեր՝ Անգեղտունը, Ծոփքը (Մեծ Ծոփքը), Արձնը (արևելյան Աղձնիք), Կորդուքը և Ծավդեքը, որոնք սակայն միջազգային իրավունքի տեսակետից Հայաստանի մաս չէին դիտվում։ Ըստ իս՝ Ներսեհը որոշել է նախքան գահի համար պայքար սկսելը լեզու գտնել հայերի և Հռոմի հետ։ Ըստ երևույթին Տրդատին են տրվել արևելյան Մեծ Հայքի շրջանները, սակայն նշված հինգ երկրամասերը՝ իրենց ռազմավարական կարևոր դերի պատճառով, Ներսեհը ինչ-ինչ պայմանագրով ստացել է, պահպանելով Հայաստանի մեծ արքա տիտղոսը։ 298 թ. հիշյալ տարածքները անցան Հռոմին, որը շատ չանցած դրանք հանձնեց Մեծ Հայքի թագավորությանը, որով իսկ պարզ է դառնում, թե ինչու այդ երկրամասերի տիրակալները սերտորեն ներառնված են Մեծ Հայքի ավատատիրական սանդղակի մեջ։

Աշխատության մեջ հստակ նույնացված են tyldt MLK' (Trdat Šah)-ը և հայոց Տրդատ III Թագավորը, սակայն մինչև 293 թ. նրան ավելի փոքր դեր է վերապահված, քան իրականում էր։

Ըստ իս, դժվար է համաձայնվել հեղինակի կազմած ժամանակագրության մի քանի կետերի հետ, ինչպիսիք են՝ Մաքսիմինոս Դայա կայսեր արշավանքը թեկուզ թեականորեն 313 թ. թվագրելը, էլի թեականորեն՝ Գրիգորի կաթողիկոսությունը 314 կամ 315 թ. դնելը և այլն։ Այս խնդիրները գրախոսության լուծելիք հարցեր չեն, ուստի չենք անդրադառնում մանրամասնին։

Աշխատությունը օժտված է Սասանյանների տոհմածառով, քարտեզով, Պայկուլիի արձանագրության վերականգնման գրաֆիկով և այլ հավելվածներով։ Տեղանվանական և անվանական ցանկերը մեծապես օգնում են աշխատությունից օգտվելուն։

Էրիխ Քեթենհոֆենի աշխատությունը իր ամբողջության մեջ հաջողված գործ է և լուրջ ներդրում պատմության գանձարանը։ Պետք է հուսալ, որ նա հետագա աշխատություններով նույնպես իր որոշակի նպաստը կբերի հայագիտությանը։

Պատմ. գիտ. դոկտոր Բ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ